

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015Թ.

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԻ

ԵՐԵՎԱՆ

2016

1



## *Բ ն վ ա ն դ ա կ ու թ յ ու ն*

Ներածություն.....	3
ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության մակարդակը 2015թ.-ին .....	3
Ամփոփագրում տեղ գտած հապավումների ցանկ .....	3
ՀՀ մակերևութային ջրերի որակի մոնիտորինգի դիտակետերի անվանացանկ.....	5
Մոնիտորինգի դիտակետերի անվանացանկ.....	5
ՀՀ մակերևութային ջրերի որակի մոնիտորինգի դիտացանցն ըստ գետավազանների .....	16
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք .....	35
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք.....	37
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք .....	38
Սևանի ջրավազանային կառավարման տարածք.....	41
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք.....	41
Հարավային ջրավազանային կառավարման տարածք.....	41
ՀՀ ջրամբարների ջրի քիմիական որակը 2015թ.-ին.....	44
Արաքս գետ.....	45
Սևանա լիճ.....	45
Էկոլոգիական նորմեր (ըստ ՀՀ կառավարության 2011թ.-ի մայիսի 27-ի N 75-Ն որոշման).....	47
Մակերևութային ջրերի աղտոտվածության չափանիշներ (ըստ 1990թ.-ին ընդունված ձկնատնտեսական նորմերի) .....	48
«Արտակարգ բարձր աղտոտվածություն» և «բարձր աղտոտվածություն» արտահայտությունների սահմանումը .....	49

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամփոփագիրը կազմված է Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրերի քիմիական որակի մասին տեղեկատվություն ապահովելու, գետերի համեմատաբար վտանգավոր հատվածները հայտնաբերելու և դրանց վերահսկողությունն ուժեղացնելու նպատակով:

2015թ.-ին մակերևութային ջրերի որակի դիտարկումներ իրականացվել են հանրապետության 40 գետի, Արփա-Սևան թունելի, Արփի լճի, Ախուրյանի, Ապարանի, Ագատի, Կեչուտի ջրամբարների և Երևանյան լճի և Սևանա լճի 124 դիտակետում, որտեղից վերցվել է 1005 փորձանմուշ, որոշվել՝ 40418 ցուցանիշ:

Ծաղկաձորում շրջակա միջավայրի որակի մոնիտորինգի միջոցառումների շրջանակում Ծառաղբյուր գետի 2 դիտակետից վերցվել է 24 փորձանմուշ, որոշվել՝ 960 ցուցանիշ:

Արաքս գետի ջրի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիտորինգի ծրագրի շրջանակում Արաքս գետից վերցվել է ջրի 60 փորձանմուշ, որոշվել՝ 2032 ցուցանիշ:

Ընդհանուր առմամբ 2015թ.-ին ՀՀ մակերևութային ջրերի որակի մոնիտորինգի համար վերցվել է 1089 փորձանմուշ, որոշվել՝ 43410 ցուցանիշ:


### **ՀՀ ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅԱՆ ՋՐԵՐԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ 2015թ.-ԻՆ**

ՀՀ գետերի և ջրամբարների ջրի քիմիական որակը գնահատվել է համաձայն ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 \_Ն որոշում) սահմանված նորմերի: ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: ՀՀ –ում Սևանա լճի և Արաքս գետի ջրի քիմիական որակի գնահատումը դեռևս կատարվում է համաձայն 1990թ.-ին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների:


### **ԱՍՓՈՓԱԳՐՈՒՄ ՏԵՂ ԳՏԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ**

ք.	-	քաղաք
գյ.	-	գյուղ
ԹԿՊ <sub>5</sub>	-	թթվածնի հնգօրյա կենսաքիմիական պահանջ
ԹՔՊ	-	թթվածնի քիմիական պահանջ
ՄԹԿ	-	սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՋԿՏ	-	ջրավազանային կառավարման տարածք

## 2015 թ-ին ՀՀ մակերևութային ջրերի քիմիական որակը



2015թ.-ին ՀՀ գետերի ջրի քիմիական որակի ամփոփ նկարագիրը (դիտակետերի ընդհանուր թիվը 96 է)





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԻ

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Դիտակետի համարը քարտեզի վրա	Մարզ	Գետ	Ջրային օբյեկտի կարգը	Դիտակետ	Դիտակետի կարգը	Դիտակետի տեղադրությունը
1	Լոռի	Փամբակ	միջին	գյ. Հարթագյուղ	4	0.5 կմ գյուղից վերև
2	Լոռի	Փամբակ	միջին	ք. Սպիտակ	3	0.5 կմ քաղաքից ներքև
3	Լոռի	Փամբակ	միջին	ք. Վանաձոր	3	0.6 կմ քաղաքից վերև
4	Լոռի	Փամբակ	միջին	ք. Վանաձոր	3	4.5 կմ քաղաքից ներքև, 0.5 կմ Մեղրուտ գյուղից ներքև
5	Լոռի	Դեբեդ	միջին		3	0.5 կմ Մարցիգետ գետի թափման կետից ներքև
6	Լոռի	Դեբեդ	միջին	գյ. Այրում	3	0.5 կմ գյուղից վերև
7	Լոռի	Դեբեդ	միջին		2	Սահմանի մոտ
8	Լոռի	Չորագետ	փոքր	ք. Ստեփանավան	4	0.5 կմ քաղաքից վերև
9	Լոռի	Չորագետ	փոքր	ք. Ստեփանավան	4	0.5 կմ քաղաքից ներքև
10	Լոռի	Չորագետ	փոքր		3	գետաբերան

Դիտակետի համարը քարտեզի վրա	Մարզ	Գետ	Ջրային օբյեկտի կարգը	Դիտակետ	Դիտակետի կարգը	Դիտակետի տեղադրությունը
11	Լոռի	Տաշիր	փոքր	գյ. Միխայելովկա	4	0.5 կմ գյուղից վերև
12	Լոռի	Տաշիր	փոքր	գյ. Սարատովկա	4	0.5 կմ գյուղից ներքև
13	Լոռի	Մարցիգետ	փոքր		4	գետաբերան
14	Լոռի	Ախթալա	փոքր		3	գետաբերան
15	Տավուշ	Աղստև	միջին	ք. Դիլիջան	3	1.2 կմ քաղաքից վերև
16	Տավուշ	Աղստև	միջին	ք. Դիլիջան	3	0.5 կմ քաղաքից ներքև
17	Տավուշ	Աղստև	միջին	ք. Իջևան	2	1 կմ քաղաքից վերև
18	Տավուշ	Աղստև	միջին		2	Սահմանի մոտ
19	Գեղարքունիք	Գետիկ	փոքր	ք. Ճամբարակ	4	0.5 կմ քաղաքից վերև
20	Տավուշ	Գետիկ	փոքր		3	գետաբերան
21	Տավուշ	Հախում	փոքր		4	Սահմանի մոտ
22	Տավուշ	Տավուշ	փոքր	ք. Բերդ	4	0.5 կմ քաղաքից վերև
23	Տավուշ	Տավուշ	փոքր		4	Սահմանի մոտ
24	Տավուշ	Հախինջա	փոքր		4	Սահմանի մոտ

Դիտակետի համարը քարտեզի վրա	Մարզ	Գետ	Ջրային օբյեկտի կարգը	Դիտակետ	Դիտակետի կարգը	Դիտակետի տեղադրությունը
25	Արմավիր	Արաքս	միջին	գյ. Սուրմալու	4	Թուրքիայի Սուրմալու գյուղի դիմաց
26	Արարատ	Արաքս	միջին		3	Հրազդան գետի թափման կետից վերև
27	Արարատ	Արաքս	միջին		3	Հրազդան գետի թափման կետից ներքև
28	Արարատ	Արաքս	միջին	գյ. Արմաշ	3	0.5 կմ գյուղից ներքև
29	Սյունիք	Արաքս	միջին	ք. Ագարակ	3	2 կմ քաղաքից հարավ
30	Սյունիք	Արաքս	միջին	ք. Ագարակ	3	2.5 կմ քաղաքից հարավ-արևելք
31	Շիրակ	Ախուրյան	միջին	ք. Ամասիա	3	0.5 կմ քաղաքից վերև
32	Շիրակ	Ախուրյան	միջին	ք. Ամասիա	3	1 կմ քաղաքից ներքև
33	Շիրակ	Ախուրյան	միջին	ք. Գյումրի	3	0.8 կմ քաղաքից վերև
34	Շիրակ	Ախուրյան	միջին	ք. Գյումրի	3	5 կմ քաղաքից ներքև
35	Արմավիր	Ախուրյան	միջին	գյ. Երվանդաշատ	4	0.5 կմ գյուղից ներքև
36	Շիրակ	Աշոցք	փոքր	գյ. Արտաշեն	4	0.5 կմ գյուղից վերև

Դիտակետի համարը քարտեզի վրա	Մարզ	Գետ	Ջրային օբյեկտի կարգը	Դիտակետ	Դիտակետի կարգը	Դիտակետի տեղադրությունը
37	Շիրակ	Աշոցք	փոքր		3	գետաբերան
38	Շիրակ	Կարկաչուն	փոքր	գյ. Ղարիբջանյան	3	1 կմ գյուղից ներքև
39	Արմավիր	Սելավ-Մաստարա	փոքր	գյ. Քարակերտ	4	0.5 կմ գյուղից վերև
40	Արմավիր	Սևջուր	միջին	ք. Վաղարշապատ	3	10 կմ քաղաքից դեպի հարավ
41	Արմավիր	Սևջուր	միջին	ք. Վաղարշապատ	3	11 կմ քաղաքից հարավ-արևելք
42	Արմավիր	Սևջուր	միջին	գյ. Ռանչպար	3	0.5 կմ գյուղից ներքև
43	Արագածոտն	Քասաղ	փոքր	ք. Ապարան	4	0.5 կմ քաղաքից վերև
44	Արագածոտն	Քասաղ	փոքր	ք. Ապարան	4	0.5 կմ քաղաքից ներքև
45	Արագածոտն	Քասաղ	փոքր	ք. Աշտարակ	3	1 կմ քաղաքից վերև
46	Արագածոտն	Քասաղ	փոքր	ք. Աշտարակ	3	3.5 կմ քաղաքից ներքև, Օշական գյուղի տարածքից
47	Արմավիր	Քասաղ	փոքր		3	գետաբերանից
48	Արագածոտն	Գեղարոտ	փոքր	գյ. Արագած	4	0.5 կմ գյուղից վերև
49	Արագածոտն	Գեղարոտ	փոքր		4	գետաբերանից

Դիտակետի համարը քարտեզի վրա	Մարզ	Գետ	Ջրային օբյեկտի կարգը	Դիտակետ	Դիտակետի կարգը	Դիտակետի տեղադրությունը
50	Արագածոտն	Հախավերդ	փոքր	գյ. Փարպի	4	0.5 կմ գյուղից ներքև
51	Գեղարքունիք	Հրազդան	միջին		3	Գեղամավան գյուղի մոտ
52	Կոտայք	Հրազդան	միջին	գյ. Քաղսի	3	0.5 կմ գյուղից ներքև
53	Կոտայք	Հրազդան	միջին	գյ. Արգել	3	0.5 կմ գյուղից ներքև
54	Կոտայք	Հրազդան	միջին	Արզնի ՀԷԿ	3	0.5 կմ ՀԷԿ-ից ներքև
55	Արարատ	Հրազդան	միջին	ք. Երևան	2	6 կմ քաղաքից ներքև, Դարբնիկ գյուղի մոտ
56	Արարատ	Հրազդան	միջին		2	գետաբերանից
57	Կոտայք	Մարմարիկ	փոքր	գյ. Հանքավան	4	0.5 կմ գյուղից վերև
58	Կոտայք	Մարմարիկ	փոքր		4	գետաբերանից
59	Երևան	Գետառ	փոքր	ք. Երևան	4	գետաբերանից
60	Գեղարքունիք	Ջկնագետ	փոքր	գյ. Սեմյոնովկա	4	0.5 կմ գյուղից վերև
61	Գեղարքունիք	Ջկնագետ	փոքր		3	գետաբերանից
62	Գեղարքունիք	Մասրիկ	փոքր	գյ. Վերին Շորժա	4	0.5 կմ գյուղից վերև
63	Գեղարքունիք	Մասրիկ	փոքր		3	գետաբերանից

Դիտակետի համարը քարտեզի վրա	Մարզ	Գետ	Ջրային օբյեկտի կարգը	Դիտակետ	Դիտակետի կարգը	Դիտակետի տեղադրությունը
64	Գեղարքունիք	Սոթք	փոքր	հանքավայր	3	0.5 կմ հանքավայրից վերև
65	Գեղարքունիք	Սոթք	փոքր		3	գետաբերանից
66	Գեղարքունիք	Կարճաղբյուր	փոքր	գյ. Աղբյուրաձոր	4	0.5 կմ գյուղից վերև
67	Գեղարքունիք	Կարճաղբյուր	փոքր		3	գետաբերանից
68	Գեղարքունիք	Թունեկ Արփա-Սևան	փոքր	գյ. Ծովինար	4	0.7 կմ գյուղից վերև
69	Գեղարքունիք	Վարդենիս	փոքր	գյ. Վարդենիկ	4	0.5 կմ գյուղից վերև
70	Գեղարքունիք	Վարդենիս	փոքր		3	գետաբերանից
71	Գեղարքունիք	Մարտունի	փոքր	գյ. Գեղիովիտ	4	0.5 կմ գյուղից վերև
72	Գեղարքունիք	Մարտունի	փոքր		3	գետաբերանից
73	Գեղարքունիք	Արգիճի	միջին	գյ. Լեռնակերտ	4	0.5 կմ գյուղից վերև
74	Գեղարքունիք	Արգիճի	միջին		3	գետաբերանից
75	Գեղարքունիք	Ծակքար	փոքր		3	գետաբերանից
76	Գեղարքունիք	Շողվակ	փոքր		4	գետաբերանից

Դիտակետի համարը քարտեզի վրա	Մարզ	Գետ	Ջրային օբյեկտի կարգը	Դիտակետ	Դիտակետի կարգը	Դիտակետի տեղադրությունը
77	Գեղարքունիք	Գավառագետ	փոքր	գյ. Ծաղկավան	3	0.5 կմ գյուղից վերև
78	Գեղարքունիք	Գավառագետ	փոքր		3	գետաբերանից
79	Արարատ	Ազատ	փոքր		4	գետաբերանից
80	Արարատ	Վեղի	փոքր	գյ. Ուրցաձոր	4	0.5 կմ գյուղից վերև
81	Արարատ	Վեղի	փոքր	ք. Արարատ	4	0.5 կմ քաղաքից վերև
82	Արարատ	Վեղի	փոքր	ք. Արարատ	4	2 կմ քաղաքից ներքև
83	Վայոց ձոր	Արփա	միջին	ք. Ջերմուկ	3	0.5 կմ քաղաքից վերև
84	Վայոց ձոր	Արփա	միջին	ք. Վայք	3	0.5 կմ քաղաքից վերև
85	Վայոց ձոր	Արփա	միջին	ք. Վայք	3	0.5 կմ քաղաքից ներքև
86	Վայոց ձոր	Արփա	միջին	ք. Եղեգնաձոր	4	0.5 կմ քաղաքից վերև
87	Վայոց ձոր	Արփա	միջին	գյ. Արենի	4	0.5 կմ գյուղից ներքև
88	Վայոց ձոր	Եղեգիս	միջին	գյ. Շատին	4	0.5 կմ գյուղից ներքև
89	Սյունիք	Մեղրիգետ	փոքր	ք. Մեղրի	4	0.5 կմ քաղաքից վերև
90	Սյունիք	Մեղրիգետ	փոքր		3	գետաբերանից

Դիտակետի համարը քարտեզի վրա	Մարզ	Գետ	Ջրային օբյեկտի կարգը	Դիտակետ	Դիտակետի կարգը	Դիտակետի տեղադրությունը
91	Սյունիք	Ողջի	միջին	ք. Քաջարան	4	1.7 կմ քաղաքից վերև
92	Սյունիք	Ողջի	միջին	ք. Քաջարան	3	1.8 կմ քաղաքից ներքև
93	Սյունիք	Ողջի	միջին	ք. Կապան	3	0.8 կմ քաղաքից վերև
94	Սյունիք	Ողջի	միջին	ք. Կապան	3	6.8 կմ քաղաքից ներքև
95	Սյունիք	Արծվանիկ	միջին		4	0.5 կմ պոչամբարից վերև
96	Սյունիք	Արծվանիկ	միջին		3	գետաբերանից
97	Սյունիք	Գեղի	փոքր	գյ. Աջաբաջ	4	0.5 կմ գյուղից վերև
98	Սյունիք	Գեղի	փոքր		4	գետաբերանից
99	Սյունիք	Որոտան	միջին	գյ. Գորայք	4	0.5 կմ գյուղից վերև
100	Սյունիք	Որոտան	միջին	ք. Սիսիան	4	1 կմ քաղաքից վերև
101	Սյունիք	Որոտան	միջին	ք. Սիսիան	3	2 կմ քաղաքից ներքև
102	Սյունիք	Որոտան	միջին	գյ. Տաթև ՀԷԿ	4	0.5 կմ գյուղից ներքև
103	Սյունիք	Սիսիան	փոքր	գյ. Արևիս	4	0.5 կմ գյուղից վերև
104	Սյունիք	Սիսիան	փոքր		4	գետաբերանից




Դիտակետի համարը քարտեզի վրա	Մարզ	Գետ	Ջրային օբյեկտի կարգը	Դիտակետ	Դիտակետի կարգը	Դիտակետի տեղադրությունը
105	Սյունիք	Տաթև	փոքր	գյ. Տաթև	4	1.5 կմ գյուղից ներքև
106	Սյունիք	Գորիսգետ	փոքր	ք. Գորիս	4	3 կմ քաղաքից վերև
107	Սյունիք	Գորիսգետ	փոքր	ք. Գորիս	3	1.5 կմ քաղաքից ներքև
108	Տավուշ	Ջողազի ջրամբար	փոքր		4	ամբարտակի մոտից
109	Շիրակ	Արփի լճի ջրամբար	փոքր		4	ամբարտակի մոտից
110	Շիրակ	Ախուրյանի ջրամբար	միջին		2	ամբարտակի մոտից
111	Արագածոտն	Ապարանի ջրամբար	փոքր		4	ամբարտակի մոտից
112	Երևան	Երևանյան լիճ	փոքր		4	ամբարտակի մոտից, գետի հոսանքով ներքև
113	Արարատ	Ազատի ջրամբար	փոքր		4	ամբարտակի մոտից
114	Վայոց ձոր	Կեչուտի ջրամբար	փոքր		4	ամբարտակի մոտից

Դիտակետի համարը քարտեզի վրա	Մարզ	Գետ	Ջրային օբյեկտի կարգը	Դիտակետ	Դիտակետի կարգը	Դիտակետի տեղադրությունը
115	Գեղարքունիք	Սևանա լիճ	շատ մեծ	թերակղզի	4	3.5 կմ թերակղզուց դեպի արևելք
116	Գեղարքունիք	Սևանա լիճ	շատ մեծ	թերակղզի	4	700 ազիմուտով թերակղզուց
117	Գեղարքունիք	Սևանա լիճ	շատ մեծ	ուղղաձիգ 121	4	Ձկնագետ գետի գետաբերանից 1 կմ հեռավորությունից
118	Գեղարքունիք	Սևանա լիճ	շատ մեծ	գլ.Շորժա	4	0.5 կմ գյուղից դեպի հարավ-արևմուտք
119	Գեղարքունիք	Սևանա լիճ	շատ մեծ	ուղղաձիգ 9	4	6.6 կմ 2250 ազիմուտով Շորժա գյուղից դեպի հարավ, հարավ-արևմուտք
120	Գեղարքունիք	Սևանա լիճ	շատ մեծ	ուղղաձիգ 128	4	2 կմ Արտանիշ ավանից 1350 ազիմուտով
121	Գեղարքունիք	Սևանա լիճ	շատ մեծ	ուղղաձիգ 107	4	10 կմ Փամբակ գյուղից 2700 ազիմուտով
122	Գեղարքունիք	Սևանա լիճ	շատ մեծ	ուղղաձիգ 18	4	2.2 կմ Փամբակ գյուղից 2550 ազիմուտով
123	Գեղարքունիք	Սևանա լիճ	շատ մեծ	ուղղաձիգ 109	4	13 կմ Փամբակ գյուղից 2350 ազիմուտով


Դիտակետի համարը քարտեզի վրա	Մարզ	Գետ	Ջրային օբյեկտի կարգը	Դիտակետ	Դիտակետի կարգը	Դիտակետի տեղադրությունը
124	Գեղարքունիք	Սևանա լիճ	շատ մեծ	Մասրիկ գետի գետաբերանի շրջանում	4	1 կմ Ծովակ գյուղից դեպի հյուսիս-արևմուտք
125	Գեղարքունիք	Սևանա լիճ	շատ մեծ	Կարճաղբյուր գետի գետաբերանի շրջանում	4	1 կմ գետաբերանից դեպի արևմուտք
126	Գեղարքունիք	Սևանա լիճ	շատ մեծ	Արփա-Սևան թունել ելքի մոտ	4	1 կմ Արծվանիստ գյուղից դեպի հյուսիս
127	Գեղարքունիք	Սևանա լիճ	շատ մեծ	Մարտունի գետի գետաբերանի շրջանում	4	1.5 կմ շրջկենտրոնից դեպի հյուսիս
128	Գեղարքունիք	Սևանա լիճ	շատ մեծ	ուղղաձիգ 30	4	15 կմ Երանոս գյուղից 900 ազիմուտով
129	Գեղարքունիք	Սևանա լիճ	շատ մեծ	ուղղաձիգ 136	4	24 կմ գյուղից 900 ազիմուտով
130	Գեղարքունիք	Սևանա լիճ	շատ մեծ	գյ.Նորաղուս	4	7 կմ գյուղից դեպի հյուսիս-արևմուտք
131	Գեղարքունիք	Սևանա լիճ	շատ մեծ	ուղղաձիգ 4	4	7.5 կմ Զկալովկա գյուղից դեպի հյուսիս

ՀՀ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑՆ ԸՍՏ ԳԵՏԱՎԱԶԱՆՆԵՐԻ


ԴԵԲԵԴ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ  
ՈՐԱԿԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ



**ԱՂԱՏԵՎ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ**







**ԱՐԱՅԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ  
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԻ  
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՅԱՆՑ**

**ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**

- Ջրի նմուշառման դիտակետեր
- Գետերի
- Լճերի և ջրամբարների
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Անտառներ
- Ախուրյան գետի ավազան








ՀՐԱԶԴԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ  
ՋՐԵՐԻ ՈՐԱԿԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ







**ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՈՐԱԿԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ**



ԱԶՍԱՏ ԵՎ ՎԵԴԻ ԳԵՏԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ  
ՋՐԵՐԻ ՈՐԱԿԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ





- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Ջրի նմուշառման դիտակետ և համար
  - Գետերի
  - Լճերի և ջրամբարների
  - Քաղաքներ
  - Բնակավայրեր
  - Գետային ցանց
  - ՀՀ պետական սահման
  - Լճեր և ջրամբարներ
  - Անտառներ
  - Ազատ գետի ավազան
  - Վեդի գետի ավազան







ԱՐՓԱ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ  
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԻ  
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ



ՄԵՂՐԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ  
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐԻ ՈՐԱԿԻ  
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ



- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
-  Ջրի նմուշառման դիտակետ
  -  ՀՀ պետական սահման
  -  Գետային ցանց
  -  Լճեր և ջրամբարներ
  -  Անտառներ
  -  Քաղաքներ և գյուղեր
  -  Մեղրի գետի ավազան







ՈՂՋԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ  
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐԻ ՈՐԱԿԻ  
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ




- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Ջրի նմուշառման դիտակետ
  - Քաղաքներ
  - Բնակավայրեր
  - Գետային ցանց
  - ՀՀ պետական սահման
  - ԼՃեր և ջրամբարներ
  - Անտառներ
  - Ողջի գետավազանի սահման



ՈՐՈՏԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ  
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ  
ՈՐԱԿԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ



- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Ջրի նմուշառման դիտակետ
  - Քաղաքներ
  - Բնակավայրեր
  - Գետային ցանց
  - ՀՀ պետական սահման
  - Լճեր և ջրամբարներ
  - Աստառներ
  - Ողջի և Արժվանիկ գետավազանների սահման






ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ  
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ  
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ



**ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**

- Ջրի նմուշառման դիտակետ և համար
- Լճերի և ջրամբարների
- ▲ Գետերի
- Քաղաքներ
- Գետային ցանց
- 22 պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Անտառածածկ տարածք
- Մևանա լճի զետափագանի սահման



**ՀՀ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ  
ՈՐԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2015Թ.-ԻՆ**

Աղյուսակ 1. ՀՀ գետերի ջրի քիմիական որակը 2015թ.-ին

Ջրավազան ային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրա- կան դասը
Հյուսիսային	Փամբակ	0.5 կմ գյ. Հարթագյուղից վերև (1)	-	2-րդ	2-րդ
		0.5 կմ ք. Սպիտակից ներքև (2)	Նիտրատ իոն, ԸԱԱ*	3-րդ	3-րդ
		0.6 կմ ք. Վանաձորից վերև (3)	Նիտրատ իոն	3-րդ	3-րդ
		4.5 կմ ք. Վանաձորից ներքև (4)	Նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, կախված մասնիկներ	3-րդ	5-րդ
			Ամոնիում իոն	5-րդ	
	Դեբեդ	0.5 կմ Մարցիգետ գետի թափման կետից ներքև (5)	-	2-րդ	2-րդ
			0.5 կմ ք. Այրումից վերև (6)	Նիտրատ իոն, կախված մասնիկներ	3-րդ
		Մոլիբդեն		4-րդ	
		Մահմանի մոտ (7)	Նիտրատ իոն, կախված մասնիկներ	3-րդ	4-րդ
	Մոլիբդեն		4-րդ		
	Ջորագետ	0.5 կմ ք. Ստեփանավանից վերև (8)	-	2-րդ	2-րդ
		Գետաբերան (10)	-	2-րդ	2-րդ
	Տաշիր	0.5 կմ գյ. Միխայելովկայից վերև (11)	ԹՔՊ	3-րդ	3-րդ
		0.5 կմ գյ. Մարատ ովկայից ներքև (12)	ԹՔՊ, նիտրատ իոն	3-րդ	3-րդ
	Մարցիգետ	Գետաբերան (13)	ԹՔՊ	3-րդ	3-րդ



Ջրավազան ային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրա կան դասը	
Հյուսիսային	Ախթալա	Գետաբերան (14)	Ամոնիում իոն, երկաթ, հանքայնացում	3-րդ	5-րդ	
			Մոլիբդեն, կոբալտ, պղինձ	4-րդ		
			Ցինկ, կադմիում, մանգան, սուլֆատ իոն, կախված մասնիկներ	5-րդ		
	Գարգառ		Ակունք (210)	–	2-րդ	2-րդ
			Գետաբերան (342)	ԹՔՊ, մոլիբդեն	3-րդ	3-րդ
	Շնող		Գետաբերան (343)	Մոլիբդեն, կախված մասնիկներ	5-րդ	5-րդ
	Աղստև		1.2 կմ ք. Դիլիջանից վերև(15)	–	2-րդ	2-րդ
			0.5 կմ ք. Դիլիջանից ներքև (16)	Ամոնիում իոն, կախված մասնիկներ	3-րդ	3-րդ
			1 կմ ք.Իջևանից վերև (17)	ԹՔՊ, ամոնիում իոն, կախված մասնիկներ	3-րդ	3-րդ
			Սահմանի մոտ (18)	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, կախված մասնիկներ	3-րդ	3-րդ
			0.5 կմ ք. Ճամբարակից վերև (19)	–	2-րդ	2-րդ
			Գետիկ		Գետաբերան (20)	–
	Ախուրյանի	Ախուրյան	0,5 կմ գյ. Ամասիայից վերև (31)	–	2-րդ	2-րդ
1 կմ գյ. Ամասիայից ներքև (32)			Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ	
0.8 կմ ք. Գյումրիից վերև (33)			Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ	

Ջրավազան ային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրա կան դասը	
Ախուրյանի	Ախուրյան	5 կմ ք. Գյումրիից ներքև (34)	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մոլիբդեն, կոբալտ, երկաթ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ	
			Ամոնիում իոն, կախված մասնիկներ	4-րդ		
		0.5 կմ գյ. Երվանդաշատից ներքև (35)	Կախված մասնիկներ	3-րդ	3-րդ	
	Աշոցք	0.5 կմ գյ. Արտաշենից վերև (36)	Գետաբերան (37)	–	2-րդ	2-րդ
				ԹՔՊ, արսեն	3-րդ	3-րդ
	Կարկաչուն	Գետաբերան (38)	ԹՔՊ, նիտրատ իոն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, կախված մասնիկներ	–	3-րդ	5-րդ
				Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	4-րդ	
				Նիտրիտ իոն	5-րդ	
	Մեծամոր	10 կմ ք. Վաղարշապատից հարավ (40)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	–	3-րդ	3-րդ
				ԹՔՊ, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
		0.5 կմ գյ. Ռանչպարից ներքև (42)	ԹՔՊ, նիտրիտ իոն, ամոնիում իոն	–	4-րդ	3-րդ
				–	3-րդ	3-րդ
Հրազդանի	Քասաղ	0,5 կմ ք. Ապարանից ներքև (44)	–	2-րդ	5-րդ	
			ԹՔՊ, ԸԱԱ, նիտրիտ իոն	3-րդ		
			Ընդհանուր ֆոսֆոր, ֆոսֆատ իոն	4-րդ		
			Ամոնիում իոն	5-րդ		

Ջրավազան ային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրա կան դասը	
Հրազդանի	Քասախ	1 կմ ք. Աշտարակից վերև (45)	–	2-րդ	2-րդ	
		3.5 կմ ք. Աշտարակից ներքև (46)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ	
		Գետաբերան (47)	ԹՔՊ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ	3-րդ	3-րդ	
	Գեղարոտ	0.5 կմ գյ. Արագածից վերև (48)	–	2-րդ	2-րդ	
		Գետաբերան (49)	Նիտրիտ իոն Նիտրատ իոն, ԸԱԱ	3-րդ 4-րդ	4-րդ	
	Հախավերդ	0.5 կմ գյ. Փարպիից ներքև (50)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ	
	Հրազդան	Հրազդան	գյ. Գեղամավանի մոտ (51)	ԹՔՊ	3-րդ	3-րդ
			0.5 կմ գյ. Քաղսիից ներքև (52)	–	2-րդ	2-րդ
			0.5 կմ գյ. Արգելից ներքև (53)	–	2-րդ	2-րդ
			0.5 կմ Արգնի ՀԷԿ-ից ներքև (54)	Նիտրատ իոն	3-րդ	3-րդ
			գյ. Գեղանիստ (225)	Լուծված թթվածին, ԹԿՊ <sub>5</sub> , ԹՔՊ, մանգան	3-րդ	5-րդ
		Նիտրիտ իոն, նիտրատ իոն, ընդհանուր ֆոսֆոր		4-րդ		
		Ամոնիում իոն, ԸԱԱ, ֆոսֆատ իոն		5-րդ		
		Հրազդան	6 կմ ք. Երևանից ներքև. գյ. Դարբնիկի մոտ (55)	Նիտրիտ իոն, նիտրատ իոն, կախված մասնիկներ	3-րդ	5-րդ
				ԹՔՊ, կոբալտ	4-րդ	
			Գետաբերան (56)	Լուծված թթվածին, ԹԿՊ <sub>5</sub> , ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	4-րդ
	Նիտրատ իոն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, կախված մասնիկներ			3-րդ		
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան	4-րդ		

Ջրավազան ային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրա կան դասը
Հրազդանի	Գետատ	Գետաբերան (59)	Նիտրատ իոն, սուլֆատ իոն, մանգան	3-րդ	5-րդ
			ԸԱԱ	4-րդ	
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	
	Մարմարիկ	0,5 կմ գյ. Հանքավանից վերև (57)	–	2-րդ	2-րդ
	Գետաբերան (58)	–	2-րդ	2-րդ	
Սևանի	Ջկնագետ	0,5 կմ գյ. Սեմյոնովկայից վերև (60)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (61)	–	2-րդ	2-րդ
	Մասրիկ	0,5 կմ գյ. Վերին Շորժայից վերև (62)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (63)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
	Սոթք	0.5 կմ հանքավայրից վերև (64)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (65)	–	2-րդ	2-րդ
	Կարճաղբյուր	0.5 կմ գյ. Աղբյուրաձորից վերև (66)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (67)	–	2-րդ	2-րդ
	Վարդենիս	0.5 կմ գյ. Վարդենիկից վերև (69)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (70)	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	3-րդ	4-րդ
			Նիտրիտ իոն	4-րդ	
	Մարտունի գետ	0.5 կմ գյ. Գեղիովիտից վերև (71)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (72)	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
	Արգիճի	0.5 կմ գյ. Լեռնակերտից վերև (73)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (74)	–	2-րդ	2-րդ
	Ծակքար	Գետաբերան (75)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
	Շողվակ	Գետաբերան (76)	–	2-րդ	2-րդ
Գավառագետ	0.5 կմ գյ. Ծաղկավանից վերև (77)	–	2-րդ	2-րդ	
	Գետաբերան (78)	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ	

Ջրավազան ային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրա կան դասը
Արարատյան	Վեղի	0.5 կմ գյ. Ուրցաձորից վերև (80)	–	2-րդ	2-րդ
		2 կմ ք. Արարատից ներքև (82)	Կախված մասնիկներ	3-րդ	3-րդ
	Արփա	0.5 կմ ք. Ջերմուկից վերև (83)	–	2-րդ	2-րդ
		0.5 կմ ք. Վայքից վերև (84)	–	2-րդ	2-րդ
		0.5 կմ ք. Վայքից ներքև (85)	Մոլիբդեն	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Եղեգնաձորից վերև (86)	Մոլիբդեն	3-րդ	3-րդ
		0.5 կմ գյ. Արենիից ներքև (87)	Մոլիբդեն	3-րդ	3-րդ
	Եղեգիս	0.5 կմ գյ. Շատինից ներքև (88)	Մոլիբդեն	3-րդ	3-րդ
	Արփա- Սևան թունել	0.7 կմ գյ. Ծովինարից վերև (68)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
Հարավային	Մեղրիգետ	0.5 կմ ք. Մեղրիից վերև (89)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (90)	Նիտրիտ իոն	3-րդ	3-րդ
	Ողջի	1.7 կմ ք. Քաջարանից վերև (91)	–	2-րդ	2-րդ
		1.8 կմ ք. Քաջարանից ներքև (92)	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, սուլֆատ իոն, մանգան, վանադիում, կոբալտ, երկաթ, ԸԱԱ	3-րդ	5-րդ
			Կախված մասնիկներ	4-րդ	
			Ամոնիում իոն, մոլիբդեն	5-րդ	
		0.8 կմ ք. Կապանից վերև (93)	Մոլիբդեն, վանադիում	3-րդ	3-րդ
	6.8 կմ ք. Կապանից ներքև (94)	Նիտրիտ իոն, ցինկ, մոլիբդեն, վանադիում, երկաթ	3-րդ	5-րդ	
		Պղինձ, ալյումին	4-րդ		
		Մանգան, կոբալտ	5-րդ		
Արծվանիկ	Գետաբերան (96)	0.5 կմ պոչամբարից վերև (95)	–	2-րդ	2-րդ
		Նիտրիտ իոն, ցինկ, կադմիում, երկաթ	3-րդ	5-րդ	
			Ալյումին, սուլֆատ իոն, կախված մասնիկներ		4-րդ
Մոլիբդեն, մանգան, վանադիում, կոբալտ, ծարիր	5-րդ				

Ջրավազան ային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրա- կան դասը
Հարավային	Գեղի	0.5 կմ գյ. Աջաբաջից վերև (97)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (98)	Մոլիբդեն	3-րդ	3-րդ
	Որոտան	0.5 կմ գյ. Գորայքից վերև (99)	–	2-րդ	2-րդ
		1 կմ ք. Սիսիանից վերև (100)	–	2-րդ	2-րդ
		3 կմ ք. Սիսիանից ներքև (101)	–	2-րդ	2-րդ
		0.5 կմ գյ. Տաթև ՀԷԿ-ից ներքև (102)	–	2-րդ	2-րդ
	Սիսիան	0.5 կմ գյ. Արևիսից վերև (103)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (104)	Մոլիբդեն, մանգան	4-րդ	4-րդ
	Գորիսգետ	3 կմ ք. Գորիսից վերև (106)	–	2-րդ	2-րդ
		1.5 կմ ք. Գորիսից ներքև (107)	ԹՔՊ, նիտրատ իոն, մոլիբդեն, ԸԱԱ*	3-րդ	5-րդ
			Ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն			5-րդ		

1 -րդ դաս՝ «գերազանց» քիմիական որակ, 2 -րդ դաս՝ «լավ» քիմիական որակ, 3 -րդ դաս՝ «միջակ» քիմիական որակ,  
4 -րդ դաս՝ «անբավարար» քիմիական որակ, 5 -րդ դաս՝ «վատ» քիմիական որակ

\* ԸԱԱ-ընդհանուր անօրգանական ազոտ

## Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Փամբակ գետի ջրի քիմիական որակը գետի վերին հոսանքում՝ Հարթագյուղից վերև հատվածում, «լավ» որակի է (2-րդ դաս), Սպիտակ քաղաքից ներքև և Վանաձոր քաղաքից վերև հատվածներում՝ «միջակ» որակի (3-րդ դաս). Սպիտակ քաղաքից ներքև՝ պայմանավորված նիտրատ իոնով և ընդհանուր անօրգանական ազոտով, Վանաձոր քաղաքից վերև հատվածում՝ պայմանավորված նիտրատ իոնով: Փամբակ գետի ջրի քիմիական որակը Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածում՝ «վատ» է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Դեբեդ գետի՝ Մարցիգետ գետի թափման կետից ներքև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս): Դեբեդ գետի Այրումից վերև և սահմանի մոտ հատվածներում ջուրը «անբավարար» որակի է (4-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Չորագետ գետի ջուրը ողջ հոսանքում «լավ» որակի է (2-րդ դաս):

Տաշիր գետի վերին և ստորին հոսանքում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս). Միխայելովկայից վերև հատվածում՝ պայմանավորված ԹՔՊ-ով, Սարատովկայից ներքև հատվածում՝ պայմանավորված ԹՔՊ-ով և նիտրատ իոնով:

Մարցիգետ գետի գետաբերանի հատվածում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված ԹՔՊ-ով:

Ախթալա գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ցինկով, կադմիումով, մանգանով, սուլֆատ իոնով և կախված մասնիկներով:

Գարգառ գետի ջուրը ակունքում «լավ» որակի է (2-րդ դաս), գետաբերանի հատվածում «միջակ» որակի (3-րդ դաս)՝ պայմանավորված ԹՔՊ-ով և մոլիբդենով:

Շնող գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և կախված մասնիկներով:

Աղստև գետի վերին հոսանքում՝ Դիլիջանից վերև հատվածում, ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ Դիլիջանից ներքև, Իջևանից վերև և սահմանի մոտ հատվածներում՝ «միջակ» որակի (3-րդ դաս). Դիլիջանից ներքև՝ պայմանավորված ամոնիում իոնով և կախված մասնիկներով, Իջևանից վերև՝ պայմանավորված ԹՔՊ-ով, ամոնիում իոնով և կախված մասնիկներով, սահմանի մոտ՝ պայմանավորված ԹՔՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, կախված մասնիկներով:


Գետիկ գետի ջուրը ողջ հոսանքում «լավ» որակի է (2-րդ դաս):

2015թ.-ին Հյուսիսային ՋԿՏ-ի գետերի ջրի որակը բնութագրող որոշ ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաների փոփոխությունները ստորև բերված են գրաֆիկական պատկերների տեսքով.

### **Փամբակ և Դեբեդ գետեր**


Միջին տարեկան կոնց. (մգ/լիթ)

**Ամոնիում իոն**



Միջին տարեկան կոնց. (մգ/դմ<sup>3</sup>)


### Մոլիբդեն



### Ախթալա գետի գետաբերան (դիտակետ №14)


#### Սուլֆատ իոն

Կոնց. (մգ/դմ<sup>3</sup>)



#### Մետաղներ

Կոնց. (մգ/դմ<sup>3</sup>)





## Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

Ախուրյան գետի Ամասիայից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), Ամասիայից ներքև և Գյումրիից վերև հատվածներում՝ «միջակ» որակի (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով: Ախուրյան գետի ջրի քիմիական որակը Գյումրիից ներքև հատվածում՝ «անբավարար» որակի է (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով և կախված մասնիկներով: Ախուրյան գետի Երվանդաշատից ներքև հատվածում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված կախված մասնիկներով:

Աշոցք գետի Արտաշենից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ԹՔՊ-ով և արսենով:

Կարկաչուն գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված նիտրիտ իոնով:


Մեծամոր գետի Վաղարշապատից հարավ և Ռանչպար գյուղից ներքև ընկած հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս): Վաղարշապատից հարավ՝ պայմանավորված ԹՔՊ-ով, ամոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոններով, Ռանչպար գյուղից ներքև՝ պայմանավորված ԹՔՊ-ով, նիտրիտ և ամոնիում իոններով, Վաղարշապատից հարավ-արևելք հատվածում ջուրը «անբավարար» որակի է (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և նիտրիտ իոններով:

2015թ.-ին Ախուրյանի ՋԿՏ-ի գետերի ջրի որակը բնութագրող որոշ ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաների փոփոխությունները ստորև բերված են գրաֆիկական պատկերների տեսքով.

### *Մեծամոր գետ*


*Միջին տարեկան կոնց. (մգ/դմ<sup>3</sup>)*

#### *Ամոնիում իոն*



*Դիտակետեր*

**Նիտրիտ իոն**



Դիտակետեր

**Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք**

Քասախ գետի Ապարան քաղաքից վերև և Աշտարակից վերև հատվածներում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ Ապարան քաղաքից ներքև ընկած հատվածում՝ «վատ» որակի (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնի պարունակությամբ: Աշտարակից ներքև և գետաբերանի հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս). Աշտարակից ներքև՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, գետաբերանի հատվածում՝ պայմանավորված ԹՔՊ-ով, նիտրատ և ֆոսֆատ իոններով, ընդհանուր անօրգանական ազոտով:

Գեղարոտ գետի Արագած գյուղից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «անբավարար» որակի է (4 -րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով և ընդհանուր անօրգանական ազոտով:

Հախվերդ գետի Փարպի գյուղից ներքև հատվածում ջուրը «միջակ» որակի է (3 -րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով:

Հրազդան գետի Քաղսի գյուղից ներքև և Արգել գյուղից ներքև հատվածներում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), Գեղամավանի մոտ և Արգնի ՀԷԿ-ից ներքև հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս). Գեղամավանի մոտ հատվածում՝ պայմանավորված ԹՔՊ-ով, Արգնի ՀԷԿ-ից ներքև հատվածում՝ պայմանավորված նիտրատ իոնով: Գեղանիստ գյուղի մոտ և Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ հատվածներում Հրազդան գետի ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). Գեղանիստ գյուղի մոտ՝ պայմանավորված ամոնիում իոնով, ընդհանուր անօրգանական ազոտով և ֆոսֆատ իոնով, Դարբնիկ գյուղի մոտ հատվածում՝ պայմանավորված լուծված թթվածնով, ԹԿՊ<sub>5</sub>-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանի հատվածում ջուրը «անբավարար» որակի է (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոններով, մանգանով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոններով, ընդհանուր ֆոսֆորով:


Մարմարիկ գետի ողջ հոսանքում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս):

2015թ.-ին Հրազդանի ՋԿՏ-ի գետերի ջրի որակը բնութագրող որոշ ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաների փոփոխությունները ստորև բերված են գրաֆիկական պատկերների տեսքով.

## Հրազդան գետ


Միջին տարեկան կոնց. (մգN/դմ<sup>3</sup>)

Ամռնիում իոն




Միջին տարեկան կոնց. (մգN/դմ<sup>3</sup>)

Նիտրիտ իոն




Միջին տարեկան կոնց. (մգ/դմ<sup>3</sup>)

Ֆոսֆատ իոն




Միջին տարեկան կոնց. (մգ/դմ<sup>3</sup>)

### Մանգան



### Փետառ գետի գետաբերան (դիտակետ № 59)

Կոնց. (մգ/դմ<sup>3</sup>)



## **Մևանի ջրավազանային կառավարման տարածք**

Մարիկ գետի Վերին Շորժա գյուղից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով:

Վարդենիս գետի վերին հոսանքում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրիտ իոնով:

Մարտունի գետի վերին հոսանքում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված նիտրիտ և ֆոսֆատ իոններով:

Ծակքար գետի գետաբերանի հատվածում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված ԹՔՊ-ով և ֆոսֆատ իոնով:

Գավառագետ գետի վերին հոսանքում՝ գյուղ Ծաղկավանից վերև հատվածում, ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով, ընդհանուր ֆոսֆորով:

Զկնագետ, Կարճաղբյուր, Արգիճի, Շողվակ և Սոթք գետերի ջուրը «լավ» որակի է:

## **Արարատյան ջրավազանային կառավարման տարածք**

Վեդի գետի Ուրցաձոր գյուղից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ Արարատից ներքև հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված կախված մասնիկներով:

Արփա գետի Ջերմուկից վերև և Վայքից վերև հատվածներում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), Վայքից ներքև, Եղեգնաձորից վերև և Արենիից ներքև հատվածներում՝ «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Եղեգիս գետի Շատին գյուղից ներքև ընկած հատվածում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Արփա-Մևան թունելի ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված ԹՔՊ-ով և ֆոսֆատ իոնով:

## **Հարավային ջրավազանային կառավարման տարածք**

Ողջի գետի Քաջարան քաղաքից վերև ընկած հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ Քաջարանից ներքև և Կապանից ներքև ընկած հատվածներում՝ «վատ» (5-րդ դաս). Քաջարանից ներքև՝ պայմանավորված ամոնիում իոնով և մոլիբդենով, Կապանից ներքև՝ պայմանավորված մանգանով և կոբալտով, Կապանից վերև հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և վանադիումով:

Արծվանիկ գետի վերին հոսանքում՝ պոչամբարից վերև հատվածում, ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով, մանգանով, վանադիումով, կոբալտով և ծարիրով:

Գեդի գետի Աջաբաջ գյուղից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Որոտան գետի ողջ հոսանքում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս):

Միսիան գետի Արևիս գյուղից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և մանգանով:

Գորիսգետի վերին հոսանքում՝ Գորիս քաղաքից վերև հատվածում, ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ Գորիսից ներքև հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոններով:


Մեղրիզետի՝ Մեղրիից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված նիտրիտ իոնով:

2015թ.-ին Հարավային ՋԿՏ-ի գետերի ջրի որակը բնութագրող որոշ ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաների փոփոխությունները ստորև բերված են գրաֆիկական պատկերների տեսքով.

### Ողջի գետ


Միջին տարեկան կոնց. (մգ/դմ<sup>3</sup>)

#### Ամոնիում իոն




Միջին տարեկան կոնց. (մգ/դմ<sup>3</sup>)

#### Մոլիբդեն




Միջին տարեկան կոնց. (ւգ/դւԲ)

### Մանգան



Միջին տարեկան կոնց. (ւգ/դւՅ)

### Կոբալտ



**ՀՀ ջրամբարների ջրի քիմիական որակը 2015թ.-ին (\*)**

Աղյուսակ 2.

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Արփիլճի ջրամբար	ամբարտակի մոտ (109)	ԹՔՊ	3-րդ	3-րդ
Ախուրյանի ջրամբար	ամբարտակի մոտ (110)	ԹՔՊ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Ապարանի ջրամբար	ամբարտակի մոտ (111)	–	2-րդ	2-րդ
Երևանյան լիճ	ամբարտակի մոտ (112)	ԹՔՊ, ԸԱԱ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Ազատի ջրամբար	ամբարտակի մոտ(113)	ԹՔՊ	3-րդ	3-րդ
Կեչուտի ջրամբար	ամբարտակի մոտ (114)	–	2-րդ	2-րդ

(\*) ՀՀ ջրամբարների ջրի քիմիական որակի գնահատումը կատարվել է համաձայն ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերի (ՀՀ կառավարության 2011թ.-ի հունվարի 27-ի N 75-Ն որոշման հավելված N2):



## ***Արաքս գետ***

Արաքս գետի 6 դիտակետից վերցված փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ըստ ձկնատնտեսական նորմերով գնահատման, գերազանցվել են ԹԿՊ5-ի, ԹՔՊ-ի, ամոնիում, նիտրիտ, սուլֆատ իոնների, վանադիումի, քրոմի, մանգանի, պղնձի, ալյումինի, երկաթի և սելենի ՍԹԿ-ները: Ըստ ձկնատնտեսական նորմերով գնահատման, Արաքս գետից վերցված փորձանմուշներում դիտվում է վանադիումով բարձր աղտոտվածություն: Վանադիումի ՍԹԿ-ն գերազանցվել է 10.2-13.6 անգամ:

Արաքս գետի գյ. Սուրմալուի դիմաց հատվածում, ըստ ձկնատնտեսական նորմերով գնահատման, դիտվում է ալյումինով բարձր աղտոտվածություն: Ալյումինի ՍԹԿ-ն գերազանցվել է 14.6 անգամ: Որոշված մյուս ցուցանիշներից 9.3 անգամ գերազանցվել է վանադիումի, 4.0 անգամ՝ քրոմի, 2.1 անգամ՝ մանգանի, 2.7 անգամ՝ պղնձի, 1.5 անգամ՝ սելենի ՍԹԿ-ները:

Արաքս գետի Հրազդան գետի թափման կետից վերև հատվածում, ըստ ձկնատնտեսական նորմերով գնահատման, 2.3 անգամ գերազանցվել է նիտրիտ իոնի, 5.5 անգամ՝ ալյումինի, 4.9 անգամ՝ քրոմի, 1.8 անգամ՝ մանգանի, 2.7 անգամ՝ պղնձի և 3.3 անգամ՝ սելենի ՍԹԿ-ները:

Արաքս գետի Հրազդան գետի թափման կետից ներքև հատվածում, ըստ ձկնատնտեսական նորմերով գնահատման, 9.3 անգամ գերազանցվել է նիտրիտ իոնի, 3.0 անգամ՝ ամոնիում իոնի, 1.8 անգամ՝ ԹՔՊ-ի, 3.7 անգամ՝ ալյումինի, 4.3 անգամ՝ քրոմի, 2.7 անգամ՝ մանգանի, 2.2 անգամ՝ պղնձի և 2.6 անգամ՝ սելենի ՍԹԿ-ները:

Արաքս գետի գյ. Արմաշից ներքև ընկած հատվածում, ըստ ձկնատնտեսական նորմերով գնահատման, 1.4 անգամ գերազանցվել է սուլֆատ իոնի, 9.0 անգամ՝ նիտրիտ իոնի, 1.7 անգամ՝ ամոնիում իոնի, 4.6 անգամ՝ ալյումինի, 4.3 անգամ՝ քրոմի, 1.5 անգամ՝ մանգանի, 2.4 անգամ՝ պղնձի և 2.7 անգամ՝ սելենի ՍԹԿ-ները:

Արաքս գետի ք. Ագարակից հարավ ընկած հատվածում, ըստ ձկնատնտեսական նորմերով գնահատման, 1.5 անգամ գերազանցվել է սուլֆատ իոնի, 1.7 անգամ՝ նիտրիտ իոնի, 3.5 անգամ՝ ալյումինի, 4.3 անգամ՝ քրոմի, 2.4 անգամ՝ պղնձի և 5.0 անգամ՝ սելենի ՍԹԿ-ները:

Արաքս գետի ք. Ագարակից հարավ-արևելք ընկած հատվածում, ըստ ձկնատնտեսական նորմերով գնահատման, 1.5 անգամ գերազանցվել է սուլֆատ իոնի, 1.9 անգամ՝ նիտրիտ իոնի, 3.7 անգամ՝ ալյումինի, 4.4 անգամ՝ քրոմի, 4.2 անգամ՝ պղնձի և սելենի ՍԹԿ-ները:

Որոշված մյուս ցուցանիշների պարունակությունները դիտվել են ՍԹԿ-ների սահմաններում:

## ***Սևանա լիճ***

2015թ.-ին Սևանա լճի հիդրոքիմիական ուսումնասիրությունների համար վերցվել են նմուշներ և լճի մակերևույթից, և լճի տարբեր խորությամբ կտրվածքներից (ընդհանուր առմամբ 16 դիտակետից): Համաձայն ստացված տվյալների Սևանա լճի թթվածնային ռեժիմն եղել է բավարար լճի բնական կենսագործունեության համար՝ դիտվելով թույլատրելի նորմի սահմանում:

Ըստ 1990թ.-ին ընդունված ՀՀ ձկնատնտեսական նորմերի Սևանա լճից վերցված փորձանմուշներում ՍԹԿ-ն գերազանցել են ԹԿՊ5-ի, ԹՔՊ-ի, վանադիումի, քրոմի, մագնեզիումի և սելենի կոնցենտրացիաները: ԹԿՊ5-ը ՍԹԿ-ն գերազանցել է 1.2-1.4 անգամ, ԹՔՊ-ն՝ 1.2-2.1 անգամ, քրոմինը՝ 1.2-3.9 անգամ, մագնեզիումինը՝ 1.2-1.7 անգամ, վանադիումինը՝ 2.9-5.9 անգամ, սելենինը՝ 1.2-5.0 անգամ: Հիմք ընդունելով լճի ջրի քիմիական որակի բազմամյա ուսումնասիրությունների տվյալները՝ մագնեզիումի, վանադիումի և սելենի այսպիսի քանակությունը լճի բնական առանձնահատկությունն է և չի համարվում աղտոտվածություն:

Որոշված մյուս ցուցանիշների պարունակությունները դիտվել են համապատասխան ՍԹԿ-ների սահմաններում:

*Մակերևութային ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ*

- |   |                               |
|---|-------------------------------|
| 1. Ջերմաստիճան                              | 25. Նատրիում                  |
| 2. Գույն                                    | 26. Լիթիում                   |
| 3. Հոտ                                      | 27. Կալցիում                  |
| 4. Թափանցելիություն                         | 28. Մագնեզիում                |
| 5. Կախված մասնիկներ                         | 29. Սելեն                     |
| 6. Տեսակարար<br>էլեկտրահաղորդականություն    | 30. Ալյումին                  |
| 7. Լուծված թթվածին                          | 31. Քրոմ                      |
| 8. Լուծված թթվածնով<br>հագեցվածության տոկոս | 32. Երկաթ                     |
| 9. Թթվածնի հնգօրյա<br>կենսաքիմիական պահանջ  | 33. Մանգան                    |
| 10. Թթվածնի քիմիական պահանջ                 | 34. Պղինձ                     |
| 11. Ջրածնային ցուցիչ                        | 35. Ցինկ                      |
| 12. Հանքայնացում                            | 36. Արսեն                     |
| 13. Կոշտություն                             | 37. Ստրոնցիում                |
| 14. Հիդրոկարբոնատներ                        | 38. Կադմիում                  |
| 15. Սուլֆատներ                              | 39. Կապար                     |
| 16. Քլորիդներ                               | 40. Կոբալտ                    |
| 17. Ֆտորիդներ                               | 41. Նիկել                     |
| 18. Ֆոսֆատներ                               | 42. Վանադիում                 |
| 19. Ֆոսֆոր ընդհանուր                        | 43. Մոլիբդեն                  |
| 20. Նիտրիտներ                               | 44. Բարիում                   |
| 21. Նիտրատներ                               | 45. Բերիլիում                 |
| 22. Ամոնիում իոն                            | 46. Բոր                       |
| 23. Սիլիցիում                               | 47. Անտիմոն                   |
| 24. Կալիում                                 | 48. Անագ                      |
|   | 49. Քլորօրգանական պեստիցիդներ |
|   | 50. Նավթամթերքներ             |

**Էկոլոգիական նորմեր (ըստ ՀՀ կառավարության 2011թ.-ի մայիսի 27-ի N 75-Ն որոշման)**

Որակի ցուցանիշներ	Որակի դաս					Միավոր
	I	II	III	IV	V	
	զերազանց	լավ	միջակ	անբավարար	վատ	
Լուծված թթվածին	>7 կամ ՖԿ*	>6	>5	>4	<4	մգ Օ <sub>2</sub> /լ
ԹԿՊ <sub>5</sub>	3	5	9	18	>18	մգ Օ <sub>2</sub> /լ
ԹԶՊ <sub>Cr</sub>	10	25	40	80	>80	մգ Օ <sub>2</sub> /լ
Ամոնիում իոն	0,2 կամ ՖԿ	0,4	1,2	2,4	> 2,4	մգ N/լ
Նիտրիտ իոն	0,01 կամ ՖԿ	0,06	0,12	0,3	>0,3	մգ N/լ
Նիտրատ իոն	1 կամ ՖԿ	2,5	5,6	11,3	>11,3	մգ N/լ
Ֆոսֆատ իոն	0,05 կամ ՖԿ	0,1	0,2	0,4	>0,4	մգP/լ
Ցինկ, ընդհանուր	ՖԿ	100	200	500	>500	մկգ/լ
Պղինձ, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+20	50	100	>100	մկգ/լ
Քրոմ, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+10 (50)	100	250	>250	մկգ/լ
Արսեն, ընդհանուր	ՖԿ	20	50	100	>100	մկգ/լ
Կադմիում, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+1	ՖԿ+2	ՖԿ+4	>ՖԿ+4	մկգ/լ
Կապար, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+10	25	50	>50	մկգ/լ
Նիկել, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+10 (20)	50	100	>100	մկգ/լ
Մոլիբդեն, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ կամ 10	4xՖԿ կամ 25	8xՖԿ կամ 50	>8xՖԿ	մկգ/լ
Մանգան, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ կամ 100	4xՖԿ կամ 200	8xՖԿ կամ 500	>8xՖԿ	մկգ/լ
Վանադիում, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ+5 կամ 10	4xՖԿ	8xՖԿ կամ 100	>8xՖԿ	մկգ/լ
Կոբալտ, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ կամ 20	4xՖԿ կամ 50	8xՖԿ կամ 100	>8xՖԿ	մկգ/լ
Երկաթ, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ կամ 0,5	0,5	1	>1	մգ/լ
Կալցիում	ՖԿ	100	200	300	>300	մգ/լ
Մագնեզիում	ՖԿ	50	100	200	>200	մգ/լ
Բարիում	ՖԿ	2xՖԿ կամ 100	4xՖԿ կամ 250	1000	>1000	մկգ/լ
Բերիլիում	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	100	>100	մկգ/լ
Կալիում	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	8xՖԿ	>8xՖԿ	մգ/լ
Նատրիում	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	8xՖԿ	>8xՖԿ	մգ/լ
Լիթիում	ՖԿ	ՖԿ	-	2500	>2500	մկգ/լ
Բոր	ՖԿ	450	700	1000	>2000	մկգ/լ
Ալյումին	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	5000	>5000	մկգ/լ
Սելեն, ընդհանուր	ՖԿ կամ 10	20	40	80	>80	մկգ/լ
Ծարիր, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	8xՖԿ	>8xՖԿ	մկգ/լ
Անագ, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	8xՖԿ	>8xՖԿ	մկգ/լ
ԹԶՊ <sub>Mn</sub>	5 կամ ՖԿ	10	15	20	>20	մգՕ <sub>2</sub> /լ
Ընդհանուր անօրգանական ազոտ	1,5 կամ ՖԿ	4	8	16	>16	մգ N/լ
Ընդհանուր ֆոսֆոր	0,1 կամ ՖԿ	0,2	0,4	1	>1	մգ լ
Քլորիդ իոն	ՖԿ	2xՖԿ	150	200	> 200	մգ/լ
Սուլֆատ իոն	ՖԿ	2xՖԿ	150	250	> 250	մգ/լ
Սիլիկատ իոն	ՖԿ	2xՖԿ կամ 10	4xՖԿ կամ 20	8xՖԿ	>8xՖԿ	մգSi/լ
Ընդհանուր հանքայնացում	ՖԿ	2xՖԿ	1000	1500**	>1500	մգ/լ
Էլեկտրահաղորդականություն	ՖԿ	2xՖԿ	1000	1500**	>1500	մկՍիմ/սմ
Կոշտություն	2,8	10	20	40	<40	մգԷկվ/լ
Կախված մասնիկներ	ՖԿ	1,2xՖԿ	2xՖԿ (30)	4xՖԿ	>4xՖԿ	մգ/լ
Հոտ (20°C և 60°C)	<2 (բնական)	2 (բնական)	2	4	>4	բալ
Գոյն	(բնական)	>5 (բնական)	20	30	>200	սստ,

\* ՖԿ - ֆոնային կոնցենտրացիա\*

**Ծանոթագրություն.** 22 14 խոշոր գետային ավազանների գետերի, գետերի առանձին հատվածների և վտակների որակի ցուցանիշների ֆոնային կոնցենտրացիաները և էկոլոգիական նորմերի ամբողջական ցանկը տրված է <http://www.armmonitoring.am/> ինտերնետային կայքում:

**Մակերևութային ջրերի աղտոտվածության չափանիշներ  
(ըստ 1990թ.-ին ընդունված ձկնատնտեսական նորմերի)**

Բաղադրամասերը և ցուցանիշները	Վնասակարության լիմիտացված ցուցանիշը	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա, մգ/դմ <sup>3</sup>
Լուծված թթվածին	Ընդհանուր պահանջները	6-ից ոչ պակաս
ԹԿՊ <sub>5</sub>	-//-	3,0
ԹՔՊ	-//-	30,0
Ամոնիում իոն (NH <sub>4</sub> <sup>+</sup> )	Թունագիտական	0,5 (N/դմ <sup>3</sup> - 0,39)
Նիտրատ իոն (NO <sub>3</sub> <sup>-</sup> )	Սանիտարա-թունագիտական	40,0 (N/դմ <sup>3</sup> - 9,0)
Նիտրիտ իոն(NO <sub>2</sub> <sup>-</sup> )	Թունագիտական	0,08 (N/դմ <sup>3</sup> - 0,02)
Ֆոսֆատ իոն(PO <sub>4</sub> <sup>2-</sup> )	Ընդհանուր պահանջները	3,5
Ընդհանուր երկաթ	Զգայարանական	0,5
Սելեն	-//-	0,001
Պղինձ	Թունագիտական	0,001
Ցինկ	-//-	0,01
Ալյումին	-//-	0,04
Վանադիում	-//-	0,001
Քրոմ	-//-	0,001
Մանգան	-//-	0,01
Կալիում	-//-	50,0
Կալցիում	-//-	180,0
Մագնեզիում	-//-	40,0
Նատրիում	-//-	120,0
Կոբալտ	-//-	0,01
Նիկել	-//-	0,01
Արսեն	-//-	0,05
Կադմիում	-//-	0,005
Կապար	-//-	0,1
Բրոմ	Սանիտարա-թունագիտական	0,2
Մոլիբդեն	-//-	0,5
Ստրոնցիում	-//-	2,0
Սուլֆատ իոն (SO <sub>4</sub> <sup>2-</sup> )	-//-	100,0
Քլոր իոն (Cl <sup>-</sup> )	-//-	300,0
Իոնների զուգարը	Ընդհանուր պահանջներում	1000,0
Կախված մասնիկներ	Ընդհանուր պահանջներում	Կախված մասնիկների պարունակությունը բնական ֆոնից չպետք է գերազանցի 0,75 մգ/դմ <sup>3</sup>

**«Արտակարգ բարձր աղտոտվածություն» և «բարձր աղտոտվածություն»  
արտահայտությունների սահմանումը**

**Բնական միջավայրի արտակարգ բարձր աղտոտվածություն համարվում է.**

***Մակերևութային ջրերի համար***

Սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի գերազանցումը 100 և ավելի անգամ (այն նյութերը, որոնց համար սահմանված է ջրում լրիվ բացակայություն, որպես սահմանային թույլատրելի կոնցենտրացիա ընդունվում է 0,01 մկգ/դմ<sup>3</sup>)

- լուծված թթվածնի պարունակության իջեցումը մինչև 2 մգ/դմ<sup>3</sup> և ցածր
- թթվածնի հնգօրյա կենսաքիմիական պահանջի (ԹԿՊ<sub>5</sub>) պարունակությունը 60 մգՕ<sub>2</sub>/դմ<sup>3</sup> և ավելի
- ջրի հոտի՝ մինչև 4 բալ և ավելի ուժեղացումը, որը բնորոշ չէ տվյալ տեղանքի համար
- 6 կմ<sup>2</sup> տարածությամբ տեսահորիզոնի 1/3-ից ավելի տարածքով որևէ թաղանթի (նավթային, յուղային և այլ ծագման) առկայությունը
- փափկամարմինների, ձկների, գորտերի և այլ ջրային օրգանիզմների և ջրային բույսերի համատարած ոչնչացումը:

**Բնական միջավայրի բարձր աղտոտվածություն համարվում է.**

***Մակերևութային ջրերի համար***

- ՍԹԿ-ի գերազանցումը 10-ից մինչև 100 անգամ (նավթամթերքների, ֆենոլների և պղնձի իոնների համար՝ 30 -ից 100 անգամ)
- ԹԿՊ<sub>5</sub>-ի կոնցենտրացիայի 15-ից մինչև 60 մգՕ<sub>2</sub>/դմ<sup>3</sup> պարունակությունը
- լուծված թթվածնի պարունակության իջեցումը 3-ից մինչև 2 մգ/դմ<sup>3</sup>
- մինչև 6 կմ<sup>2</sup> տարածությամբ տեսահորիզոնում ջրի մակերևույթի 1/4-ից մինչև 1/3 տարածությամբ թաղանթի առկայությունը (նավթային, յուղային և այլ ծագման)
- 6կմ<sup>2</sup>-ից ավելի տեսահորիզոնում ջրի մակերևույթի 1-ից մինչև 2կմ<sup>2</sup> տարածքով թաղանթի առկայությունը: